ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 օգոստոսի 2025 թվականի N 1134-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-Ի N 1694-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի ոլորտի պետական ընկերությունների 2003-2007 թվականների ֆինանսական առողջացման ծրագրի ու 2003-2007 թվականների ֆինանսական հոսքերի կանխատեսումների և մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1694-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշման 4-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ա) **«Հայկական ատոմային էլեկտրակայան»** փակ բաժնետիրական ընկերության տնօրենների խորհուրդը բաղկացած է 7 անդամից՝ 2 անդամ առաջարկվում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի կողմից, մեկական անդամ՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմից և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի կողմից, իսկ «Էլեկտրա-էներգետիկական համակարգի օպերատոր», «Հաշվարկային կենտրոն» և «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունների գլխավոր տնօրեն-ները՝ ի պաշտոնե:

«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» և **«Բարձրավոլտ էլեկտրացանցեր»** փակ բաժնետիրական ընկերություններից յուրաքանչյուրում տնօրենների խորհուրդները բաղկացած են 6 անդամից՝ 3 անդամ առաջարկվում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի կողմից, իսկ ընկերու-թյունների գլխավոր տնօրենները՝ ի պաշտոնե, մեկական անդամ՝ էլեկտրաէներգետիկական շուկայի մասնավոր հատվածը ներկայացնող ընկերության, էներգետիկական ոլորտին առնչվող ակադեմիական (գիտական) որևէ հաստատության կողմից.»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

14.08.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ